

Բերբերեանը լաջող կերպով պաշտպանում է «Լեոնին» այն քննադատների առարկութեանց դէմ, որոնք հերոսից գործ են պահանջում, իսկ նա միայն խօսում է. «Իրականութեանը հաւատարիմ մնալ ցանկացող հեղինակը պարտական էր վերցնել հէնց աչնպիսի մի անձնաւորութիւն, որ Լեոնի նման ցաւում է ազգային ցաւերով, տեսնում է նրա թշուառութիւնը, քաջութիւն ունի բաց ճակատով խաւարի քարեկամների դէմ դուրս գալ, լուսաւորութեան կարևորութիւնը քարոզել և գործունէութեան լայն ծրագիրներ կազմել, բալց ինքը—լի գործում Կան շրջաններ, երբ գործը կարծես ամփոփուում է խօսքի մէջ. Լեոնն այդ շրջանի մարդն էր»:

Խորհուրդ ենք տալիս ընթերցողներին կարդալ Բերբերեանի այս փոքրիկ, բալց դեղեցիկ և դրական պարզ ոճով գրուած ուսումնասիրութիւնը:

ԲՐԻՉ

Հանդէս Հայագիտութեան. Zeitschrift für armenische Philologie. Unter Mitwirkung von Abgar Joannisiany, herausgegeben von Franz Nikolaus Finck, als verantwortlichem Redacteur, Eznik Gjandschian und Agop Manandian. Erster Band, erstes Heft. Marburg 1901 էջ 96. *Միեւնոյնը* Erster Band, zweites Heft. 1902. էջ 97—176.

Վաղուց է արդէն, որ եւրոպացի լեզուաբան գիտնականները ուշադրութիւն են դարձրել մեր հին լեզուի, գրաբարի վրայ և բաղմաթիւ աշխատութիւններ լոյս ընծայել այդ նիւթի մասին, որոնց մեծ մասը ցրուած է եւրոպական—գերմանական, ֆրանսիական, անգղիական և այլն—մասնագիտական պարբերական թերթերի մէջ. Յարգելի ուսուցչապետ Ֆ. Ն. Ֆիւնկը, որ մի քանի տարի է իւր քրոջ, գր. Ֆինկի հետ, սք. Էջմիածնում և Թիֆլիզում ապրելով հայոց լեզուն և գրականութիւնն է ուսումնասիրում, մի շատ օգտակար միտք է լցացել հրատարակել մի մասնագիտական պարբերական թերթ հայագիտութեան մասին: Այսուհետև հայագէտ գիտնականների հետազօտութիւնները ցրուած չեն լինի այս ու այն

կողմը և եթէ ոչ բոլորը, գոնէ ըստ մեծի մասին, ամփոփուած կլինին այս նոր հանդիսի մէջ: Հալագիտութեան այս նոր պարբերական թերթը լոյս է տեսնում Գերմանիայի Մարբուրգ (Հեսսենում) համալսարանական քաղաքում: Հանդիսի ճակատից իմանում ենք, որ թերթը լոյս է տեսնում պ. Արդար Յովհաննիսեանի աջակցութեամբ և Նդնիկ վարդապետ Գեանջեցեանի ու պ. Յակոբ Մանանդեանի գործակցութեամբ: Յալժմ հրատարակուել են առաջին հատորի առաջին և երկրորդ տետրները (ամեն մի հատորը բաղկացած պէտք է լինի չորս տետրից. հատորի զինը հինգ միթ.): Հանդիսի ղերմաներէն անունը թէ և «Հանդէս հալական բանասիրութեան կամ լեզուաբանութեան» գաղափարով է սահմանափակուած, սակայն հայերէն կոչումը՝ «Հանդէս հալագիտութեան», աւելի լայն ծաւալ ունի, որովհետեւ բանասիրութիւնից դուրս դեռ ևս շատ բան կալ, որ կարող է «հալագիտութեան» շրջանի մէջ ամփոփուել:—Սրինակ հէնց առաջին տետրում հրատարակուած հ. Ամիրտաս վարդապետի հետաքրքրական լոգուածը մեր ժողովրդական պարբերի մասին:—«Armeniens volkstümliche Reigentänze».—

Այս երկու տետրներում հրատարակուած են ևւրոպայի հալագէտների՝ Սոֆոլուս Ռուդոլֆի (Armen. մագիլ.) Գեւրցերի և Eznik und die Entwicklung des persischen Religions-systems), Մէլէի (De quelques archaïsmes remarquables de la déclinaison arménienne), Ե. Մ. Շմիդի (Geschichte des Apostels Thaddäus und der Jungfrau Sanduchtjaus d. Altarm. übers) և Ֆինկի (Kleinere mittelarmenische Texte.) աշխատութիւնները: Հալ լեզուաբաններից հանդէս են եկել Նդնիկ վարդ. Գեանջեցեանը (Beiträge zur altarmenischen nominalen Stammbildungslehre) և Աճարեանը (Zauntlehre des Van-Dialekts):

Բացի Մէլէի լոգուածից, որ Ֆրանսերէն է, մնացած բոլոր աշխատութիւնները գրուած են գերմաներէն լեզուով: Կան երկու փոքրիկ նկատողութիւններ հայերէն աշխարհաբարով մէկ լեզուադիտական, Գ. Վանցեանի, իսկ միւսը բանասիրական: Ի՞նչ միտք ունի հայերէն աշխարհաբար լեզուով լոգուածներ տպագրել մի մասնագիտական թերթի մէջ, որ ըստ մեծի մասին հրատարակում է եւրոպական գիտնականների համար. դրքաւոր լեզուն չեն հասկանում և եթէ հայերէն փոքր ի շատէ՛

գիտեն, աչն էլ զրաբար: Հալ լեզուաբանները նույնպէս հը-
մուտ են գոնէ մի եւրոպական լեզուին, քանի որ առանց այդ
հմտութեան չէին կարող լեզուաբանութեան մասնագէտ լի-
նել: Այդպիսի, հայերէն լեզուով գրուած, բնաստիական լո-
ղուածները համար բաց են վեննալի «Հանդէս ամսօրեայ-
Լ ուրիշ հալ թերթերի էջերը:

«Հալագիտութեան հանդիսին» ցանկանում ենք կատա-
րեալ լաջողութիւն և որ գլխաւորն է՝ լարատ և ու թիւն:

ԲՐԻՉ

ՄՏԱՅՈՒԱԾ ԿՐՔԵՐ

- Յ ա ու ս տ. ողբ. Գէօթէի. դերմ. թարգմանեց Գէորգ Բարխու-
ղարեանց. հրատ. Արշակ Բաբեանի. Թիֆլիզ 1902.
- Բժ. Ս. Շահնաղարեանց. Հայոց թեմական հոգևոր դըպ-
րոցների կանոնադրութեան նախագիծը. Մոսկուա 1902.
- Ա. Ա. Շահմուրադեանց. Ի՞նչ է կանանց նպատակը.
Բաղու. 1902.
- Մինաս Բերբերեան. Սմբատ Շահաղիզ. (Լտիւդ). Վտակ
ժողովածուից.
- Ե. Թ. Սահակ Պարթև, հրատ. Յով. Արամեանցի № 4. Ս. Պ.
Բ. 1902.
- Հէնրիէտտա Վիտհօֆ. Թմիլիկը. թարգմ. օր. Շ. Տ-ն.
Թիֆլիս 1902.
- Աղգալին մատենադարան. ԼԸ.-Նկատողութիւններ
Փաւստոսի պատմութեան վերաբերեալ. Գ. Տէր Պօղո-
սեան. Վիեննա. 1901.
- »ԼԹ.—Արարատը ս. գրոց մէջ. ուսումն. Ս. Վէբերի. թարգմ.
Բառնաբաս Վ. Պիլէդիկեան. Վիեննա 1901.
- »Խ. Ասորեստանեայ և սյարսիկ սեպածև արձանագրութիւնք.
Թարգմ. Յով Վ. Սանդալեան. Վիեննա. 1901.
- Շրջաբերական նորընտիր վարչ. ժողովոյ առ աղգալինս Փարի-
զի. Փարիզ. 1902.
- Հայիւ բարեգործական ընկերութեան հայոց Ն. Նախիջևանի
վասն 1901 ամի. Ն. Նախիջ. 1902.
- Макариѣ, уроки чистописанія для дѣтей. С. П. Б. 1901.
- Բժ. Վ. Արծրունի. Վարակիչ հիւանդութիւններ և նրանց
թոյնը. Թիֆլիզ. 1902.
- Zeitschrift für Armenische Philologie. Unter Mitwirkung
von Abgar Ioannissiany, herausgegeben von F. N. Finck.
I B. erstes und zweites Heft. Marburg 1901—2.